



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄՐԱԿԱՉԱՏԱՏ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաչատ համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաչատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

29 հունվարի 2016թվականի N 01

**ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաչատ գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 29-ի թիվ 1 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

Կողմ-6

Դեմ-0

Ձեռնպահ-0

1. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ

2. ՄԿՐՏՅԱՆ ՆՈՐԱՅՐ

3. ԶՐԱՂԱՅՊԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ

4. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԳՈՌ

5. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՄԱՐՏԻԿ

6. ՏԵՐ-ԳԵՂԱՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ



ՀԱՎԵԼՎԱԾ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ  
ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի ԹԻՎ 01  
ՆԻՍՏԻ 01 ՈՐՈՇՄԱՆ



Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի ՆԻՍՏԻ ԹԻՎ 01 ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի ԹԻՎ 01 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ  
ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԿԱՄՄՎՈՐ  
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ՄԻԶՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ, ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ  
ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՆ ՈՒ  
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16 Ի ԹԻՎ 31 Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՆԱՄՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

29 հունվարի 2016թվականի N 02

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 32-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

**ՀԱՄԱՅՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքներում արձանագրված խախտումների վերացման ուղղությամբ ձեռնարկել համապատասխան միջոցներ:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի ղեկավարին՝ սույն որոշմամբ նախատեսված գործառույթների ավարտից հետո սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԵՐԻԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ

2. ՄԿՐՏՉՅԱՆ ՆՈՐԱՅՐ

3. ԶՐԱՂԱՅՊԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ

4. ՄԱՐԻԲԵԿՅԱՆ ԳՈՌ

5. ՄԱՐԻԲԵԿՅԱՆ ՄԱՐՏԻԿ

6. ՏԵՐ-ԳԵՂԱՍՅԱՆ ԳԵՂԱՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**



**ԱՐԲԱԿ ԵՐԻԱԶԱՐՅԱՆ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

29 հունվարի 2016թվականի N 03-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴԻՐՈՒԹՅԱՄԲ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ  
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԿԱՄԱՎՈՐ  
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հաստատել Հայաստանի օրենսդրությամբ Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Մույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:  
Ավագանու անդամներ                      Կողմ-6                      Դեմ-0                      Ձեռնպահ-0

- |                        |  |
|------------------------|--|
| 1. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ    |  |
| 2. ՄԿՐՏՅԱՆ ՆՈՐԱՅՐ      |  |
| 3. ԶՐԱՂԱՑՊԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ |  |
| 4. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԳՈՌ      |  |
| 5. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՄԱՐՏԻԿ   |  |
| 6. ՏԵՐ-ԳԵՂԱՍՅԱՆ ԳԵՂԱՄ  |  |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԲԱՍԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի

ԹԻՎ 01 ՆԻՍՏԻ N3-Ն ՈՐՈՇՄԱՆ



ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՍԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատի գյուղական համայնքի , այսուհետ համայնք, ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը.
2. Համայնքի, իր անունից և իր պատասխանատվությամբ իրականացվող գործառույթներն, սեփական լիազորություններն իրենց բնույթով բաժանվում են պարտադիր, նախատեսված օրենսդրությամբ և կամավոր լիազորությունների. Համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունները սեփական լիազորությունների մասն են.
3. Կամավոր լիազորություններն իրականացվում են համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և համայնքի ավագանու կողմից սահմանված կարգով.
4. Սույն կարգում թվարկված կամավոր լիազորություններն սպառիչ չեն. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից բացի այլ օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունները համայնքը կարող է իրականացնել միայն որպես կամավոր լիազորություններ. Համայնքի ղեկավարը կարող է իրականացնել համայնքային

շահերին վերաբերող, օրենքին չհակասող ցանկացած գործունեություն:

5. Համայնքի ղեկավարը, օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում, համայնքի տարածքում կամավոր լիազորություններն իրականացնում է հետևյալ բնագավառներում՝

- 1) պաշտպանության կազմակերպման
- 2) քաղաքաշինության և կոմունալ տնտեսության
- 3) հողօգտագործման
- 4) տրանսպորտի
- 5) կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների
- 6) առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
- 7) աշխատանքի և սոցիալական պաշտպանության

**II. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ**

6. Պաշտպանության կազմակերպման բնագավառում համայնքի ղեկավարը՝

- 1) աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը.
- 2) աջակցում է զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, ինչպես նաև զինծառայողներին արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը.
- 3) աջակցում է բնակչության, հատկապես երիտասարդության ազմահայրենասիրական դաստիարակությանը:

7. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում համայնքի ղեկավարը՝

- 1) իրականացնում է բնակարանային և սոցիալական նշանակության այլ օբյեկտների շինարարությունը և կապիտալ վերանորոգումը.
- 2) իրականացնում է կառուցապատման աշխատանքները.
- 3) կազմում է <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված, ըստ անհրաժեշտության մշակվող, քաղաքաշինական փաստաթղթերի նախագծերը.

- 4) կազմակերպում է հանգստի վայրերի խնամքը և պահպանությունը:
  - 5) կազմակերպում է սանիտարական մաքրման կայանքների շինարարությունը և շահագործումը:
8. Յոզոգտագործման բնագավառում համայնքի ղեկավարը՝
- 1) իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողամասերի բարելավման աշխատանքներ:
  - 2) իրականացնում է ներտնտեսային հողաշինարարական աշխատանքներ:
9. Տրանսպորտի բնագավառում համայնքի ղեկավարը՝
- 1) կազմակերպում է համայնքային ենթակայության ճանապարհների, կամուրջների և ինժեներական այլ կառույցների շինարարությունը:
10. Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում համայնքի ղեկավարը՝
- 1) աշակցում է արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը:
  - 2) աշակցում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությանը:
  - 3) հաշվառում, դասակարգում և տարածում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային, բնական և տուրիստական-ռեկրեացիոն ռեսուրսների մասին տեղեկատվությունը:
  - 4) աշակցում է երիտասարդության դերի բարձրացմանը:
  - 5) աշակցում է հանրակրթական դպրոցների գործունեությանը:
11. Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համայնքի ղեկավարը՝
- 1) աշակցում է սանիտարական վիճակի բարելավմանը:
  - 2) աշակցում է առողջապահական մարմինների՝ սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացմանը:
  - 3) նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, իրականացնում է սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարությունը, ստեղծում է հանգստի գոտիներ:
12. Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում համայնքի ղեկավարը՝




- 1) նպաստում է նոր աշխատատեղերի ստեղծմանը, կազմակերպում է վճարովի հասարակական աշխատանքներ.
  - 2) միջոցներ է ձեռնարկում հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ:
13. Գյուղատնտեսության բնագավառում համայնքի ղեկավարը՝
- 1) աջակցում է գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը.
  - 2) աջակցում է տոհմային և սերմնաբուծական աշխատանքներին:

**III. ԿԱՄԱԿՈՐ Լ Ի ԱՉՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ**

14. Համայնքի ղեկավարը, համայնքի բյուջեից ֆինանսավորում պահանջող կամավոր լիազորությունների իրականացման նպատակով, մինչև համայնքի տվյալ տարվա բյուջեի հաստատումը, համայնքի ղեկավարը համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում իրականացվելիք կամավոր լիազորությունների ցանկը և դրանց կատարման համար անհրաժեշտ ծախսերը:
15. Համայնքի ավագանին, ելնելով համայնքի բյուջեի հնարավորություններից, որոշում է բոլոր կամավոր լիազորությունների համար հատկացվող ընդհանուր գումարի և յուրաքանչյուր կամավոր լիազորության իրականացման համար անհրաժեշտ հատկացման չափը:
16. Հաշվետու տարվա ընթացքում կամավոր լիազորությունների ընդհանուր գումարի սահմաններում մի կամավոր լիազորության իրականացման նպատակով հատկացված գումարը կարող է համայնքի ավագանու որոշմամբ ուղղվել մեկ կամ մի քանի այլ կամավոր լիազորությունների իրականացման համար՝ ելնելով տարվա ընթացքում իրադրության փոփոխություններից:

**ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ**

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝**



**Ս.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

29 հունվարի 2016թվականի N 04-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԵՐԻԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ

2. ՄԿՐՏՅԱՆ ՆՈՐԱՅՐ

3. ԶՐԱՂԱՑՊԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ

4. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԳՈՌ

5. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՄԱՐՏԻԿ


6. ՏԵՐ-ԳԵՂԱՄՅԱՆ ԳԵՂԱՄ

*(Handwritten signatures of the six council members listed above)*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**ԱՐԲԱԿ ԵՐԻԱԶԱՐՅԱՆ**





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

Սույն կանոնադրությամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները՝ ելնելով համայնքի պատմականորեն ձևավորված ավանդույթների և պատմաճարտարապետական միջավայրի պատմական անհրաժեշտությունից:

Լ.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, որպես կանոն, մշակվում և հաստատվում է գոտևորման նախագծի կազմում՝ հավելվածի տեսքով:
- 1.2. Համայնքի ավագանու որոշմամբ քաղաքաշինական կանոնադրությունը կարող է մշակվել նաև մինչև գլխավոր հատակագծի և /կամ/ գոտևորման նախագծի մշակումը՝ որպես առանձին փաստաթուղթ: Այս դեպքում կանոնադրությունը կցվում է նախագծային առաջադրանքին և պարտադիր հաշվի է առնվում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման ընթացքում:
- 1.3. Համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված պայմանները ներառվում են համայնքի ղեկավարի կողմից կառուցապատողին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում՝ համապատասխան դրույթներ ամրագրելով առաջադրանքի ձևի «Լրացուցիչ պայմաններ» բաժնում:

II. ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԻ/ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

/ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ/

- 2.1. Համայնքի տարածքում գտնվող կարևոր շենքերի և շինությունների ճարտարապետական ոճի, կրկնվող և հաճախ կիրառվող տարրերի, ճակատների ձևավորման առանձնահատկությունների, օգտագործված շինանյութի և կառուցման եղանակի նկարագրությունը:
- 2.2. Նկարագրությունը հիմնավորվում է համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

- 3.1. Համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների նկարագրությունը,

դրանց ներկայիս վիճակը, վերականգնման ու պահպանման հետ կապված խնդիրները:

3.2. Տվյալները հիմնավորվում են պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներով, համապատասխան լուսանկարներով:

#### IV. ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Նկարագրվում են համայնքի տարածքում գտնվող համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող շենքերը և շինությունները, բերվում են դրանց հետ առնչվող պատմությունները, ներկայացվում են շենքերի և շինությունների ներկա վիճակը, վերականգնման և պահպանման հետ կապված խնդիրները:

4.2. Տվյալները հիմնավորվում են համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

#### V. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽՐԱԽՈՒՍՎՈՂ ՃԱՐՏԱՐԱԿԵՏԱԿԱՆ ՈՃԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

5.1. Թվարկվում են այն ճարտարապետական ոճերը, հնարքները, դեկորատիվ տարրերը, ճակատների ձևավորման առանձնահատկությունները, դռների, պատուհանների համաչափությունները, շինարարական նյութերը և կառուցման եղանակը, որոնք պահպանվելու են համայնքի տարածքում և իրախուսվելու են նոր շենքերի կառուցման ժամանակ:

1. Շենքերի և շինությունների ծավալային ու ճարտարապետահատակագծային լուծումներին, ինչպես նաև դրանց առանձին մասերին ներկայացվող պահանջները

ա. շենքի մասշտաբը, ճակատային լուծումներն ու դրանք շեշտադրող տարրերը (զարդաքանդակները, շքամուտքը (պորտալը), որմնախորշերը, շվաքարանները, քիվերը, կամարները և այլն),

.....

բ. շենքի ճակատային մասի արտաքին բացվածքների (դռներ, պատուհաններ, ցուցափեղկեր) ձևավորումը,

.....

գ. շենքի տանիքներն ու շենքերի հորիզոնական հարթությունները («ժինգերոդ ճակատ»), ինչպես նաև ճակտոնները (ֆրոնտոնները), մանսարդները, ձեղնանցքները, եզրապատերը (պարապետները) և այլն,

.....

դ. շվաքարանները (տենտերը, մարկիզաները),

.....

ե. շենքի ճակատների և տանիքի հարդարման նյութերն ու երանգավորումը, արտաքին լուսավորությունը.

.....

2. Փողոցների, անցումների, հետիոտն ճանապարհների ու հեծանվատուղիների (ճանապարհային ցանց), հրապարակների, ներքին բակերի, շքաբակերի (կուրդոնյերների) և հարթակների կառուցվածքին ու ձևավորմանը, ավտոկայանատեղիների կազմակերպմանը ներկայացվող պահանջները

ա. ճանապարհային ծածկույթը (կյուրը, դեկորատիվ տարրերը և գունային լուծումները),

բ. համայնքն սպասարկող տրանսպորտի համար նախատեսված կանգառների ձևավորումը,

գ. հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի տեղաշարժման համար անհրաժեշտ կահավորանքը (թեքահարթակներն ու հատուկ հարմարանքները՝ լուսային, ձայնային և այլ նախագգուշացման միջոցներով),

դ. ֆունկցիոնալ ձևավորումը, կանաչապատումը և կահավորանքը (փոքր ճարտարապետական ձևեր կամ դեկորատիվ արվեստի նմուշներ, զրուցարաններ, շվաքարաններ, նստարաններ, շատրվաններ, դեկորատիվ ջրավազաններ, կանաչ տնկարկներ, այդ թվում՝ ուղղահայաց կանաչապատում և այլն),

ե. ճանապարհային ցանցին հարող պարիսպների, ցանկապատերի (այդ թվում՝ դալար ցանկապատերի) կառուցվածքին, կյուրին ու ձևավորմանը ներկայացվող պահանջները.

3. Լանդշաֆտին, այգեպուրակային շինարարությանը և կանաչապատմանը ներկայացվող պահանջները

ա. ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների և հետիոտն շարժման ակտիվ գոտիների կանաչապատումն ու բարեկարգումը (փոքր ճարտարապետական ձևեր, ջրային մակերեսներ, շատրվաններ, նստարաններ, տաղավարներ, զրուցարաններ և բարեկարգման այլ տարրեր),

բ. այգեպուրակային շինարարության կազմը (հենապատեր, ծառուղիներ, հարթակներ, աստիճաններ, ինչպես նաև ծառեր, թփեր, սիզամարգեր, ծաղկաթմբեր և գալարվող բույսեր, դեկորատիվ բուսական ծածկույթ, բազմամյա և միամյա բույսերի տեսակներ, կանաչապատման և բարեկարգման այլ միջոցներ),

գ. անհրաժեշտության դեպքում՝ քանոն դեմ պաշտպանական գոտու ստեղծման միջոցառումները (ծառատունկ, կանաչ ծածկույթների իրականացում տեղական ավանդական տնկանյութերի տեսակներից՝ տարբեր բարձրության բույսերի զուգակցմամբ),

ԲԱՍԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲԱՐՏՈՒՂԱՐ

Ս.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հասցե: Երևան, 21

Տեղ: Ըն

Հարկատվ. բույսական

6 ծանոթանում են ԽՄ-ների նիստերի արձանագրություններին.

7 կատարում են ԽՄ-ների որոշումներից բխող կամ ԽՄ-ների նախագահի կողմից տրված հանձնարարականներ.

8 նախաձեռնում են ՀԱԽ-երի ձևավորումը:

9. ՍՈՒՅՆ ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ /ԿԱՍ/ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ,  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

62. Սույն կարգը վերանայվում է համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ: Համայնքի ղեկավարը կարող է առաջարկություններ ներկայացնել համայնքի ավագանուն՝ փոփոխություններ և /կամ/ լրացումներ կատարելու սույն կարգում կամ դադարեցնելու դրա գործողությունը:

63. Սույն կարգի մեջ փոփոխությունների և /կամ/ լրացումների կատարումը, գործողության դադարեցումը, համայնքի ղեկավարի ներկայացմամբ, իրավասու է կատարել միայն համայնքի ավագանին՝ իր համապատասխան որոշմամբ:

ԲԱՍԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Ս.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

29 հունվարի 2016թվականի N 05-Ն

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ, ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ  
ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՆ ՈՒ  
ՁՈՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

1. Հաստատել Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի ղեկավարին կից համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող նասներորդ օրը:

Ավագանու անդամներ	Կողմ-6	Դեմ-0	Ձեռնպահ-0
-------------------	--------	-------	-----------

1. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ

2. ՄԿՐՏՅԱՆ ՆՈՐԱՅՐ

3. ԶՐԱՂԱՑՊԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ

4. ՄԱՐԻԲԵԿՅԱՆ ԳՈՌ

5. ՄԱՐԻԲԵԿՅԱՆ ՄԱՐՏԻԿ

6. ՏԵՐ-ԳԵՂԱՄՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ



ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորում են համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների /այսուհետ՝ ԽՄ-ների/ ձևավորման և գործունեության հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կարգի նպատակն է՝ ձևավորել համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության հստակ, արդյունավետ մեխանիզմներ՝ ապահովելով փոխադարձ կապն ու համագործակցությունը, մի կողմից, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների և , մյուս կողմից, համայնքում քաղաքականություն մշակող և որոշում ընդունող տեղական ինքնակառավարման մարմինների /ՏԻՄ-երի/ միջև:
3. Սույն կարգի խնդիրներն են.
  - 1 հստակեցնել ԽՄ-ների գործունեության նպատակները, խնդիրները և գործառույթները.
  - 2 սահմանել ԽՄ-ների քանակն ու անվանումները.
  - 3 սահմանել ԽՄ-ների ձևավորման, անդամների ընտրության մոտեցումները և գործունեության կարգը.
  - 4 հստակեցնել ԽՄ-ների գործունեությանն առնչվող կողմերի դերերը և գործառույթները.
  - 5 սահմանել այլ մարմինների հետ ԽՄ-ների հարաբերությունները.
  - 6 սահմանել ԽՄ-ների գործունեության դադարեցման, սույն կարգում փոփոխությունների և /կամ/ լրացումների կատարման մոտեցումները:

2. ԽՄ-ՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. ԽՄ-ները համայնքի ղեկավարին կից, հասարակական կարգով գործող մարմիններն են, որոնց միջոցով ապահովվում է համայնք բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը համայնքի կառավարմանն ու զարգացմանը: ԽՄ-ները, որպես համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների միավորված խումբ, կարող են խորհրդատվություն, եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին՝ այդպիսով ակտիվ մասնակցություն ունենալով համայնքում քաղաքականությունների մշակման, որոշումների ընդունման և դրանց իրականացման արդյունքների մոնիթորինգի և գնահատման գործընթացներին:

5. ԽՄ-ների նպատակն է՝ նպաստել համայնքում տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանը և հասցեականությանը՝ ապահովելով համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների նպատակահարմար և տեղական ինքնակառավարմանը:



հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների  
ուսումնասիրությունը տեղական ինքնակառավարմանը:

6. ԽՄ-ների խնդիրներն են.

- 1) խորհրդատվություն տրամադրել համայնքի ղեկավարին համայնքի զարգացման ուղղությունների վերաբերյալ:
  - 2) ազգասովի տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների, քաղաքացիական մասնակցության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունն ու նրանց ձայնի հասանելիությունը ՏԻՄ-երին.
  - 3) երականացնել հանրային մշտադիտարկում (մոնիթորինգ) ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ:
7. ԽՄ-ների գործառույթներն են.
- 1) ազգասովի համայնքի բնակիչների իրազեկությունը ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ.
  - 2) աջակցել և մասնակցել համայնքի զարգացման քառամյա ծրագրի, բյուջեի և այլ ծրագրային խառաբերի մշակման, քննարկման, իրականացման և վերահսկման, մոնիթորինգի, աուդիտի և շահատանջ աշխատանքներին.
  - 3) եզրագացություններ և առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին համայնքին ստեղծող կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի վերաբերյալ.
  - 4) վերնահեղ տվյալ ոլորտում հանրային կարևորություն և հնչեղություն ունեցող խնդիրները և դրանց վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին.
  - 5) զբաղմունքներ և քննարկել համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից բարձրացված հարցերը և դրանց վերաբերյալ եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին.
  - 6) բրահանացնել հանրային մշտադիտարկում (մոնիթորինգ) ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ.
  - 7) ազգասովի հարթակի կողմից, համայնքի ղեկավարի, աշխատակազմի, համայնքային շնթ սեյտո բյուջե կազմակերպությունների համար և, այդու կողմից, համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների շարժառույթների միջև կապի և երկխոսության համար.
  - 8) աջակցել և մասնակցել գոնֆլիկտների կանխարգելմանը, ծագած կոնֆլիկտների լուծմանը, նպաստել ուսուցչության առկա հավաստությունների մեղմմանը.
  - 9) հետազոտել ԽՄ-ների կողմից ընդունված որոշումների հետագա կատարման ընթացքին.
  - 10) առաջգործակցել համայնքային աշխատանքային խմբերին այլ մարմիններին հետ.
  - 11) առաջադրել «Համայնքի ակտիվ բնակիչ» խրախուսական մրցանակի թեկնածու:

### 3. ԽՄ-ՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ

8. Համայնքի ղեկավարին կից ձևավորվում և գործում են թվով երեք ԽՄ-ներ: Դրանք են.

- 1) Համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման ԽՄ.
- 2) Քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի ԽՄ.
- 3) Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության ծրագրի, սոցիալական (այդ թվում՝ երեխաների պաշտպանության) հարցերի ԽՄ:

4. ԽՄ-ՆԵՐԻ ԿԱԶՄԸ, ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ,  
ՆՐԱՆՅ ԹԵՎՆԱՏՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

ԽՄ-ների կազմը և ձևավորումը

9. ԽՄՄ ներք կարգով են ունենալ մինչև 25 անդամ:
10. ԽՄՄ ներք ձևավորում են համայնքում, եթե նշանակված է տվյալ ԽՄՄ-ի անվագն հինգ անդամ:
11. ԽՄՄ ներք ունեն նախագահ և քարտուղար: Նախագահը և քարտուղարը ԽՄՄ-ների անդամ չեն:
12. ԽՄՄ ներքի կազմում կրենց համաձայնությամբ կարող են ներգրավվել:
  - 1) հասցիքի ավագանու մեկից երեք անդամ:
  - 2) հասցիքի աշխատակազմի կամ համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետներ:
  - 3) քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և խմբերին կայացուցիչներ:
  - 4) մասնավոր հատվածի կազմակերպությունների և խմբերի ներկայացուցիչներ:
  - 5) պետական կառավարման մարմինների՝ համայնքի տարածքում գործող տարածքային ծառայությունների ներկայացուցիչներ:
  - 6) հասցիքում գոյծող բազմաբնակարան բնակելի շենքերի կառավարման մարմինների լիազորությունների, հավատարմագրային կամ լիազորագրային կառավարման մարմինների, գոտեբնակավայրերի՝ ապլիկ) և (կամ) համայնքի թաղամասերի նբնակավայրերի ներկայացուցիչներ:
  - 7) վոլանտյերներ:
  - 8) ակտիվ բնակիչներ:
  - 9) այլ ռեսուրսային անձինք:
13. Յուրաքանչյուր կազմակերպությունից կամ խմբերից կարող է ներգրավվել մեկ անդամ:
14. ԽՄՄ ներք ձևավորվում են սույն կարգն ընդունելու վերաբերյալ ավագանու որոշման ուժի մեջ գտնվող օրվանից հետո մեկ ամսվա ընթացքում:
15. ԽՄՄ ներք գործում են մինչև համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետի ավարտը:
16. Նորընտիր համայնքի ղեկավարն իր լիազորությունները ստանձնելուց հետո մեկ ամսվա ընթացքում ձևավորում է նոր կազմով ԽՄՄ-ներ:
17. ԽՄՄ ներքի անդամ կարող է լինել 16 տարին լրացած յուրաքանչյուր անձ:
18. ԽՄՄ ներքի անդամ չեն կարող լինել:
  - 1) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք:
  - 2) սովորաբար ժամանակահատվածում հասարակապարտված անձինք, ովքեր իրենց պատիժը կրում են ընթացքում:
  - 3) դատապարտված անձինք, ովքեր իրենց պատիժը կրում են ընթացքում:
19. ԽՄՄ ներքի անդամներին նշանակում է համայնքի ղեկավարը՝ համապատասխան որոշմամբ: ԽՄՄ ներքի անդամները նշանակվում են մինչև համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետի ավարտը: Համայնքի նորընտիր ղեկավարը, նոր կազմով ԽՄՄ-ներ ձևավորելիս, կարող է ներանձնակազմով ԽՄՄ-ների անդամներին վերջիններիս համաձայնությամբ:
20. ԽՄՄ ներքի անդամների թեկնածուների առաջադրումը կատարվում է հետևյալ կարգով:
  - 1) համայնքի ավագանու անդամի թեկնածուին առաջադրում է համայնքի ավագանին՝ իր որոշմամբ (թեկնածուի համաձայնությամբ):
  - 2) հասցիքի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետի թեկնածուին առաջադրում է համայնքի ղեկավարը (թեկնածուի համաձայնությամբ):
  - 3) ԽՄՄ ներքի նյութ անդամների թեկնածուներին առաջադրում է ԽՄՄ-ների անդամների ընտրության ապստակով համայնքի ղեկավարի կողմից ձևավորված հանձնաժողովը՝ դիմում ներկայացրած անձանց կազմից:
21. ԽՄՄ ներքի անդամների լրացատրությամբ համայնքի ավագանու անդամի և համայնքի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետի թեկնածուների ընտրությունը կատարվում է հրապարակային հայտարարության հիման վրա:

դսմամբ ներկայացրած անձանց կազմից: Հայտարարությունը տրվում է սույն կարգն քննարկելու վերաբերյալ ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15 օրվա ընթացքում: Հասարակությունը փակցվում է ՏՄ-երի նստավայրում, ինչպես նաև այն վայրերում, որոնք հասանելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար: Բանավարձ մեկ տեղ յուրաքանչյուր է: Երկրի հարցեր բնակչի համար: Համայնքի պաշտոնական ինտերնետային (համացանցային) էջի անվտանգության դեպքում հայտարարությունը պարտադիր կերպով տեղադրվում է այդ էջում: Ինչպես նաև կարող է տարածվել տեղական զանգվածային լրատվության միջոցներով, օրինակ՝ հեռուստատեսությամբ և ժամանակակից հեռահաղորդակցության այլ միջոցներով (հեռախոսագրանցումով, կարճ (SMS) հաղորդագրություններով և այլն): Հայտարարության մեջ նշվում է, թե որ ՏՄ-ներին անվամակցելու համար է կատարվում հրավերը, ովքեր, ինչպես և ինչ ժամկետներում կարող են դիմել: Դիմումի ձևաչափային նմուշը սահմանված է հավելված 1-ում:

22. ԵՄ-ների անդամների (քացառությամբ համայնքի ավագանու անդամի և համայնքի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետի) թեկնածուների ընտրության նպատակով հանձնաժողովի կողմից անց է կացվում հարցազրույց: Հանձնաժողովը նախագահում է համայնքի ղեկավարը: Հանձնաժողովի կազմում կարող են ելնառնակել համայնքի աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի էքսպերտներ, ներկայացուցիչներ: Հանձնաժողովը կարող է ունենալ երեք անդամ:

23. ԵՄ-ների անդամների (քացառությամբ համայնքի ավագանու անդամի և համայնքի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետի) թեկնածուների ընտրության ժամանակ կարող են նախապես հետևյալ չափանիշները.

- 1) թեկնածուի կրթական ցենզը.
- 2) համայնքի բնակչության տարբեր խմբեր ներկայացնող անձանց (կանայք, երիտասարդներ, խոցելի խմբեր, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլն) ներկայացուցչության ապահովումը.
- 3) հասարակական կարգով աշխատանքներ կատարելու նախկին փորձը.
- 4) հասարակ կազմում բնդգրկված բնակավայրերի ներկայացուցչության ապահովումը.
- 5) օտարազրույցի արդյունքները:

24. Դիմում ներկայացրած այն անձինք, ովքեր չեն բնորվել և նշանակվել որպես ՏՄ-ներից որևէ մեկի անդամ, պահվում են դիմում ներկայացրած անձանց ռեզերվում:

25. ԵՄ-ի անդամի գործունեությունը ղաղաբեցվում է համայնքի ղեկավարի որոշմամբ, եթե ՏՄ-ի անդամը

- 1) դիմում է ներկայացրել տվյալ ՏՄ-ի կազմից զուրս գալու վերաբերյալ.
- 2) դատական կարգով ձանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- 3) ասիա է նրա նկատմամբ դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական լուրացման նախապատիժը կրում է քրեականատարողական հիմնարկում.
- 4) զորակոչվել է ժամկետային զինձառայության.
- 5) քրեկան ձևով անհարգելի պատճառով չի մասնակցել ՏՄ-ի նիստերի աշխատանքին.
- 6) Լուրացվել է:

26. Եթե ՏՄ-ի անդամի գործունեության ղաղաբեցման հետևանքով տվյալ ՏՄ-ի անդամների թիվ նվազել է երկուից, ապա համայնքի ղեկավարը 15 օրվա ընթացքում նշանակում է նոր անդամ: Եթե ղա հնարավոր չէ, ապա 15 օրվա ընթացքում նոր տրված անդամության հետևանքով դիմում ներկայացրած անձանց կազմից:

- 27. Եթե սվյա խՄ-ի անդամ հանդիսացող ավագանու ներկայացուցիչը կամ համայնքի աշխատակազմի կամ համայնքային ենթակայության կազմակերպությունների ներկայացուցիչը կազմակերպում է գործունեությունն իր պաշտոնում, նա կարող է շարունակել անդամակցել խՄ-ին:
- 28. ԽՄ-ների նախագահը համայնքի ղեկավարն է: Համայնքի ղեկավարի բացակայության ժամանակ, խՄ-ների նախագահի գործառույթներն իրականացնում է համայնքի ղեկավարի տեղակալը:
- 29. ԽՄ-ների բարսուղարը համայնքի աշխատակազմի բարսուղարն է կամ նրա կողմից նշանակված համայնքի աշխատակազմի ներկայացուցիչը:

**5. ԽՄ-ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

- 30. ԽՄ-ների անդամներն իրենց գործունեությունն իրականացնում են անձամբ, հասարակական նիստերով:
- 31. ԽՄ-ների գործունեության տեղեկատվական և մասնագիտական ապահովումը կազմակերպում է համայնքի աշխատակազմի բարսուղարը անհրաժեշտության դեպքում, աշխատակազմի բաժինների և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ներգրավմամբ և մասնակցությամբ:
- 32. Համայնքի ղեկավարը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում (նիստերի անկյունի ելուցիստ ասենյակ, համակարգիչ, գրասենյակային պարագաներ և այլն) խՄ-ների՝ սույն կարգով սահմանված գործունեության իրականացման և նիստերի կազմակերպման ու անցկացման համար:
- 33. ԽՄ-ները գումարում են անձամբ անհրաժեշտության դեպքում, սակավաշարժ խմբերի, կարողալու և լսելու խնդիրներով ունեցող անձանց մասնակցությունն ապահովելու համար:
- 34. ԽՄ-ները գումարում են նիստեր՝ առնվազն երեք ամիսը մեկ անգամ: Անհրաժեշտության դեպքում դառալ են իրավիճակ արտահերթ նիստեր: Նիստերը հրավիրում և վարում է խՄ-ների նախագահը:
- 35. ԽՄ-ի առաջին նիստը գումարվում է սվյալ խՄ-ի անդամներին նշանակելու մասին համայնքի ղեկավարի որոշումն ընդունելուց հետո 20 օրվա ընթացքում:
- 36. ԽՄ-ների նիստերը կազմակերպվում և անց են կացվում ՏԽՄ-երի նստավայրում կամ համայնքի ղեկավարի որոշմամբ մեկ այլ վայրում:
- 37. ԽՄ-ի նիստի վայրը, ամսաթիվը և քննարկման ենթակա հարցերի օրակարգը հրապարակվում էրեսուրի ամսվազն երկու աշխատանքային օր առաջ: Նշյալ տեղեկատվությունը փակցվում է ՏԽՄ-ի նստավայրում ինչպես նաև այն վայրերում, որոնք հասանելի են համայնքի յուրաքանչյուր մասնակցի հասանելի ամսվազն մեկ օրով յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար: Համայնքի աշխատանքային կայքի անկայության դեպքում, նշյալ տեղեկատվությունը պարտադրապես տեղադրվում է այլ կայքում, ինչպես նաև կարող է տարածվել տեղական զանգվածային լրատվության միջոցներով, տեղական հեռուստատեսությամբ և ժամանակակից միջոցներով (հեռախոսագանգերով, կարճ (SMS) հաղորդագրություններ և այլն):
- 38. ԽՄ-ի նիստի թրամազրը է, եթե նիստին ներկա են խՄ-ի անդամների թվի կեսից ավելին: Եթե նիստի թրամազրում չի ապահովվում սվյալ նիստի իրավագորությունը, կամ նիստին չի ներկայացվում նիստի չի սկսվում, ապա նիստի չկայացման մասին կազմվում է ակտիվացման, որն ստորագրում են խՄ-ի նիստին ներկայացած անդամները:
- 39. ԽՄ-ի նիստի շարունակվում է մինչև օրակարգի սպառումը:
- 40. ԽՄ-ի նիստի արձանագրվում է խՄ-ի բարսուղարի կողմից:

41. ԽՄ-ների նիստերը դոնբաց են: ԽՄ-ի նիստին կարող են հրավիրվել տվյալ նիստի օրակարգի նախաձեռնում ընդգրկված հարցերին առնչվող անձիք, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

42. ԽՄ-ի անդամը ԽՄ-ի նախագահի կողմից կարող է հեռացվել ԽՄ-ի նիստից՝ նիստի աշխատանքների խախտողություն դեպքում:

43. ԽՄ-ի նիստի օրակարգի նախագիծը կազմում է համայնքի ղեկավարը: ԽՄ-ի նիստի օրակարգի նախագիծը ձևավորվում է տվյալ ԽՄ-ի քարտուղարին նիստից առնվազն հինգ աշխատանքային օր առաջ ներկայացված գրավոր հարցերից: Հարցեր կարող են ներկայացնել նաև ԽՄ-ի բոլոր անդամները:

44. ԽՄ-ի նիստի օրակարգի նախագիծը, քննարկվող հարցերի վերաբերյալ կից փաստաթղթերը ԽՄ-ի բաժան դարը ներկայացնում է ԽՄ-ի անդամներին նիստից առնվազն երկու աշխատանքային օր առաջ:

45. ԽՄ-ի նիստի օրակարգի նախագծում նշվում են.

- 1) նիստի անցկացման վայրը, ամսաթիվը և ժամը.
- 2) քննարկման ենթակա հարցերը.
- 3) քննարկվող յուրաքանչյուր հարցի զեկուցողի անունը և ազգանունը:

46. ԽՄ-ի նիստն սկսվում է ԽՄ-ի նիստի օրակարգի հաստատումով՝ ԽՄ-ի նիստին ներկա անդամների ձայների սեծասանությամբ:

47. ԽՄ-ների որոշումներն ընդունվում են ԽՄ-ների եզրակացությունների և (կամ) առաջարկությունների ձևով որոնք ներկայացվում են համայնքի ղեկավարին: ԽՄ-ների որոշումները համայնքի ղեկավարի համար կրում են խորհրդատվական բնույթ: ԽՄ-ների որոշումների հիսան վր համայնքի ղեկավարը կարող է քննունել համապատասխան որոշումներ:

48. ԽՄ-ի որոշումն ընդունվում է տվյալ նիստին ներկա անդամների ձայների սեծասանությամբ: Հավասար ձայների առկայության դեպքում վճռորոշ է տվյալ ԽՄ-ի տարեց անդամի ձայնը:

49. ԽՄ-ի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: ԽՄ-ների նախագահը (համայնքի ղեկավարը) ունի խորհրդակցական ձայնի իրավունք:

50. ԽՄ-ի որոշման մեջ նշվում են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ԽՄ անդամների անունները և ազգանունները: ԽՄ-ի որոշումը ստորագրում են ԽՄ-ի նիստին ներկա անդամները:

51. ԽՄ-ների նիստերն արձանագրվում են ԽՄ-ների քարտուղարի կողմից: Նիստի արձանագրություն ներառում է.

- 1) նիստի անցկացման վայրը և ամսաթիվը.
- 2) յիստին մասնակցած ԽՄ-ի անդամների, հրավիրված անձանց անունները և ազգանունները.
- 3) նիստի օրակարգը.
- 4) քննարկված հարցերի, զեկուցումների և ելույթների հիմնական դրույթները.
- 5) ընդունված որոշումները, դրանց ներկայացման և հրապարակման ձևերը.
- 6) ընդունված որոշումներին դեմ քվեարկածների հասուկ կարծիքները (եթե այլապիսի կան):

Նիստի արձանագրությանը կցվում են տվյալ ԽՄ-ի քննարկմանը դրված նյութի և ստանաախբությունները, լուսանկարները, տեսանյութերը և այլն:

52. ԽՄ-ների նիստերի արձանագրությունները ստորագրում է ԽՄ-ների քարտուղարը:

## 6. ԽՄ-ՆԵՐԻ ՀԱՍՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

53. ԽՄ-ները մշտական կապ են հաստատում և համագործակցում են համայնքի տարածքում գործող այլ մարմինների՝ համայնքի ավագանու հանձնաժողովների, համայնքի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի կազմակերպությունների և խմբերի ներկայացուցիչների և շահագրգիռ այլ անձանց հետ:

54. ԽՄ-ները ուղղակի կապ են հաստատում համայնքային աշխատանքային խմբերի (ՀԱՍ-երի) հետ, որոնք կարող են ձևավորվել ըստ համայնքի ղեկավարի՝ օրենքով սահմանված գործունեության բազա-խառնի (ոլորտների) կամ դրանց խմբերի, ըստ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի կամ ըստ համայնքի առանձին թաղամասերի: ԽՄ-ների անդամները կարող են նախաձեռնել նման ՀԱՍ-երի ձևավորումը: ՀԱՍ-երի ձևավորումը համայնքի բնակիչների կողմից նախաձեռնվելու դեպքում նրանք կարող են այդ մասին տեղեկացնել այն ԽՄ-ին, որի գործունեության ոլորտին առնչվում են սույն ՀԱՍ-ի ձևավորման նպատակները: ՀԱՍ-ի անդամների կազմը կախված է համայնքի ղեկավարի և համապատասխան ԽՄ-ի հետ: ՀԱՍ-երն իրենց կողմից կատարված աշխատանքների արդյունքները համայնքի ղեկավարին ներկայացնելուց բացի ներկայացնում են նաև այն ԽՄ-ին, որին առնչվում են այդ արդյունքները: ԽՄ-ները սեփական ձգնույթուն, խորհրդատվություն և տեխնիկական աջակցություն են տրամադրում ՀԱՍ-երին նրանց աշխատանքները նպատակային և արդյունավետ իրականացնելու համար:

## 7. ԽՄ-ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

55. Համայնքում գործող ԽՄ-ների գործունեությունը դադարեցվում է.

- 1) երբ լրացել է համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետը.
- 2) երբ սույն կարգում փոփոխությունների և (կամ) լրացումների արդյունքում փոխվել են ԽՄ-ների քանակները և (կամ) անվանումները:

## 8. ԽՄ-ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ԴԵՐԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

56. Համայնքի ավագանին.

- 1) առաջնիքի ղեկավարի ներկայացմամբ, հաստատում է սույն կարգը.
- 2) առաջնիքի ղեկավարի ներկայացմամբ, փոփոխություններ և (կամ) լրացումներ է կատարում սույն կարգի մեջ կամ դադարեցնում է սույն կարգի գործողությունը.
- 3) առաջնիքի ղեկավարի ներկայացմամբ, ծանոթանում է ԽՄ-ների ուսումնասիրությունների եզրակացությունների և առաջարկությունների հետ.
- 4) առաջնիքի ղեկավարի ներկայացմամբ, ԽՄ-ների եզրակացությունների և առաջարկությունների հիման վրա ընդունում է համապատասխան որոշումներ,
- 5) կարող է համայնքի ղեկավարից պահանջել տեղեկանքներ համայնքի տարածքում գործող ԽՄ-ների գործունեության վերաբերյալ:

57. Համայնքի ղեկավարը.

- 1) Առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի ղեկավարին կից, համայնք տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների բանակ անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու վերաբերյալ.
  - 2) Առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն փոփոխություններ և (կամ) լրացումն կատարելու սույն կարգում կամ դադարեցնելու դրա գործողությունը.
  - 3) ձևավորում է ԽՄ-ների անդամների ընտրության հանձնաժողով.
  - 4) նշանակում է ԽՄ-ների անդամներին.
  - 5) դադարեցնում է ԽՄ-ների անդամների լիազորությունները.
  - 6) կազմակերպում, ղեկավարում և նախագահում է ԽՄ-ների գործունեությունը.
  - 7) անհրաժեշտ պայմաններ է ստեղծում ԽՄ-ների՝ սույն կարգով նախատեսված գործունեության իրականացման, նիստերի կազմակերպման ու անցկացման համար.
  - 8) հրավիրում և վարում է ԽՄ-ների նիստերը.
  - 9) որոշում է ԽՄ-ների նիստերին հրավիրվող անձանց կազմը.
  - 10) ձևավորում է ԽՄ-ների նիստերի օրակարգերի նախագծերը.
  - 11) ձևակերպում է ԽՄ-ների ուսումնասիրություններին, եզրակացություններին և առաջարկություններին.
  - 12) ԽՄ-ների եզրակացություններին և առաջարկություններին հիման վրա նախաձեռնում է անհրաժեշտ գործողություններ, ընդունում է որոշումներ կամ առաջարկություններ է ներկայացնում համայնք ավագանուն համապատասխան որոշումներ ընդունելու համար.
  - 13) նախաձեռնում է ՀԱԽ-երի ձևավորումը.
  - 14) Համաձայնություն է տալիս համայնքի տարածքում ձևավորվող ՀԱԽ-երի կազմի վերաբերյալ:
58. Համայնքի ղեկավարի տեղակալը.
- 1) փոխարինում է համայնքի ղեկավարին որպես ԽՄ-ների նախագահ, նրա բացակայության ժամանակ:
59. Համայնքի աշխատակազմի քարտուղարը.
- 1) կազմակերպում է ԽՄ-ների գործունեության տեղեկատվական և մասնագիտական ապահովման աջակցում է ԽՄ-ների գործունեությանը, նիստերի կազմակերպմանը և անցկացմանը.
  - 2) քրահանապետ է ԽՄ-ների քարտուղարի գործառույթները անձամբ կամ նշանակում է ԽՄ-քարտուղարին:
60. ԽՄ-ների քարտուղարը.
- 1) հարցեր է ընդունում ԽՄ-ների անդամներից ԽՄ-ների նիստերի օրակարգերի նախագծ ընդգրկելու համար.
  - 2) ապահովում է ԽՄ-ների կազմակերպչա-տեխնիկական աշխատանքների իրականացումը.
  - 3) ապահովում է ԽՄ-ների անդամների և նիստերին հրավիրված անձանց իրազեկումը նիստ անցկացման օրվա, ժամի, վայրի և քննարկվող հարցերի մասին.
  - 4) վարում է ԽՄ-ների գործավարությունը.
  - 5) կազմում և ստորագրում է ԽՄ-ների նիստերի արձանագրությունները.
  - 6) ապահովում է ԽՄ-ների գործունեության, ընդունված որոշումների հրապարակայնությունը:
61. ԽՄ-ների անդամները.
- 1) մասնակցում են ԽՄ-ների նիստերին.
  - 2) հարցեր են ներկայացնում ԽՄ-ների նիստերի օրակարգերի նախագծերում ընդգրկելու համար.
  - 3) ներկայացնում են բանավոր կամ գրավոր կարծիք ԽՄ-ների նիստերի ընթացքում քննարկվող հարցերի վերաբերյալ.
  - 4) մասնակցում են ԽՄ-ների որոշումների ընդունման քվեարկությանը.
  - 5) ստորագրում են ԽՄ-ների որոշումները.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

29 հունվարի 2016թվականի N 06-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Պեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

